



**«Նոր ժամանակի
կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱ
Ն
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հե տազո տո լ թյ ան թե ման՝ Ը ն տան ի ք ի
հ ո գ ե բ ան ո լ թյ ո լ ն, կ ո ն Ֆ լ ի կ ն եր**

Առ ար կ ան՝ ա ջ խ ար հ ա գ թ ո լ թյ ո լ ն

Հե տազո տո ղ ո լ ս ո լ ց ի չ՝ Գ այ ան ե Բ աբ այ ան

**Ո լ ս ո լ մ ն ա կ ան հ ա ս տ ա տ ո լ թյ ո լ ն՝ Թ ե ղ ե ն ի ք ի Վ.
Ջ ի ն ի շ յ ան ի ան վ ան մ ի ջ ն ա կ ար գ դ պր ո ց**

Երևան 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՀԱՐՑ	
Ի՞նչ նկարագիր ունեն ընտանեկան կոնֆլիկտները, որո՞նք են առաջացման պատճառները	4
• Ինչպիսի՞ ազդեցություն են ունենում ծնողների փոխհարաբերությունները երեխայի վրա	9
• Ինչու՞ են առաջանում կոնֆլիկտներ ծնող-երեխա հարաբերություններում	10
ԽՆԴԻՐ	
• Որո՞նք են կոնֆլիկտների լուծման եղանակները	12
ՆՊԱՏԱԿ	
• Ինչպե՞ս լուծել հակամարտությունը ընտանիքում և հնարավո՞ր է արդյոք կանխել այն	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16

Ներածություն

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրոյնություն:

Ընտանիքը պետության հոգատարությամբ շրջապատված հասարակական մի բջիջ է, որը զուգակցում է մարդկանց անձնական շահերը և նպաստում հասարակարգի և պետության կայունությանը: Ներկա ժամանակաշրջանում պետությունը շահագրգռված է ստեղծել ամուր ,համերաշխ ընտանիք, քանի որ ընտանիքի կայունությունը նպաստում է հասարակարգի և պետության կայունացմանը:

Ընտանիքը միայն ամուսնական,ազգակցական կապերով, ընդհանուր հոգևոր և նյութական շահերով կապված անձանց միությունն է: Ընտանիքը հասարակության մի մասնիկն է:

Ընտանիքի կարևորագույն մասերից է օրենսդրությունը: Օրենսդրության մեջ գոյություն ունի ընտանեկան իրավունք, որտեղ օրենքը որոշում է ընտանիքում կնոջ, ամուսնու, երեխաների և ծնողների դերը ընտանիքում, իրավունքներն ու պարտականությունները: Ընտանեկան օրենսգրքով ձևաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում արձանագրված ամուսնությունը, այսինքն եկեղեցական ամուսնությունը պետության կողմից չի ձևաչվում:

Ընտանիքը որպես հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ տարբերվում է սովորական սոցիալական խմբերից: Ընտանիքում գոյություն ունեն հոր, մոր, զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ, պարտականություններ: Ընտանիքի կայացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի նախապատրաստումը ընտանեկան կյանքին:

Ամուսնության ամրության և ընտանիքի արդյունավետ գործառնման ընթացքում անհատական պահանջմունքների դերի կարևորությունը ստիպում է ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում պահել ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը: Շատ դեպքերում խնդրի արդյունավետ լուծման համար ամուսնական կամ ընտանեկան պահանջմունքները դասակարգվում են:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե կրտսեր և թե ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի, լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևորագույն դեպքերի մասին: Խոսքի օգնությամբ քննարկվում են բազմազան հարցեր, երեխաները ստանում են խորհուրդ, ձևավորվում են բարոյական արժեքներ, աշխարհայացք, էթիկա, էսթետիկա և ի վերջո մշակույթ:

Որո՞նք են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները,

առաջացման պատճառները

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների և ազգակիցների միջև առաջացնում լարվածություն, սթրես, տհաճ հոգեվիճակներ, անտարբերություն, սառնասրտություն, օտարացում:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում կապված բացասական սուր հուզական ապրումների հետ : Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների դիրքորոշումների կարծիքների հայացքների բախումն է:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի, Ստոյարոնկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն: Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմանը՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով:

Կոնֆլիկտն առհասարակ ունի նաև իր դրական ազդեցությունը: Մասնավորապես.

- Ներքաշվելով կոնֆլիկտի մեջ՝ մենք սովորում ենք, նոր գիտելիքներ և հմտություններ ենք ձեռք բերում ամուսնական, ընտանեկան հարաբերություններում, հարստացնում ենք անձնական փորձը
- Կոնֆլիկտը մեզ զգուշացնում է մարդկանց այլ խմբերի գոյության մասին, որոնց հետաքրքրությունները, արժեքները և պահանջները պարտավոր ենք հաշվի առնել, երբ ընտրություն ենք կատարում / չունեն բնակարան, հաշմանդամ են, գործազուրկ են և այլն /:
- Կոնֆլիկտն օգնում է մեզ հասկանալ, որ կան մարդիկ, որոնց շահերն անտեսված են, որոնք ուշադրության և աջակցության կարիք ունեն:
- Կոնֆլիկտն ընկած է բարեշրջման հիմքում: Հայտնի գիտնականներ Գալիլեո Գալիլեյը և Ջորդանո Բրունոն ձևակերպեցին գիտական մի տեսություն, որը չէր համապատասխանում ժամանակի կրոնական պատկերացումներին: Թեև գիտնականները պատժվեցին / Գալիլեյին դատապարտել են ցմահ տնային կալանքի, իսկ Բրունոյին այրել են խարույկի վրա/, սակայն այս կոնֆլիկտը նպաստեց գիտության զարգացմանը:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցական կուլտուրայի, փոխադարձ վստահության,

քաղաքավարության ուշադրության բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Շփման ժամանակ հնարավոր են տեղեկատվության կորուստներ կամ փոփոխություններ: Խոսակցության ընթացքում մարդը չի կարող առանց աղավաղումների փոխանցել իրենթադիտակցության մեջ գտնվող և քննարկված հարցի հետ կապված ողջ տեղեկատվությունը:

Տեղեկատվության մի մասը կորչում է տվյալ մարդու բառապաշարի պակասից: Շփվելով շրջապատի մարդկանց հետ՝ յուրաքանչյուր ոք օգտագործում է տվյալ լեզվի ոչ բոլոր բառերը: Օրինակ ռուս բանաստեղծ Պուշկինի բառապաշարը 21000 բառ էր: Միջին կրթություն ունեցող այսօրվա մարդու բառապաշարը կազմում է 4000 բառ: Որքան սակավ է բառապաշարը, այնքան նրա համար դժվար է արտահայտել իր մտքերը և փոխանցել դրանց նրբերանգները: Այդ պատճառով շրջապատը նրան չի հասկանում, կամ սխալ է հասկանում: Իսկ դա հիմք է հանդիսանում տարբեր կոնֆլիկտների առաջացման համար: Նկարագրվածի վառ օրինակ է «Փչացած հեռախոս» խաղը:

Կոնֆլիկտների պատճառ կարող է հանդիսանալ նաև հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ – հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առաքծնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. Ներանձնային – պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և իրադարձությունները: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:
2. Միջանձնային- կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:
3. Անհատական – խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:
4. Միջխմբային – այս կոնֆլիկտի դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև:

Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են.

- I. Գործունեության բնույթը՝ հարձակվողական, պաշտպանվողական, չեզոք
- II. Ակտիվության կոնֆլիկտներ՝ սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդ, կյանքին տարբեր հայացքներով նայելը
- III. Ներքին կոնֆլիկտ՝ դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քնի տասնամյակների ընթացքում, ապրում են ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ձգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին՝ դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին, ընկերական շրջապատին և այլն: Նմանատիպ կոնֆլիկտներ կարող են հանդիպել ընտանիքի բոլոր անդամների միջև:

Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, երեխայի և ծնողի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու:

Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության պատճառներով.

1. Սեփական ես-ի նշանակալիության, կարևորության, պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում
2. Դրական հույզերի, պահանջմունքների, քնքշանքի, հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն
3. Ցածր կրթամակարդակ
4. Աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ
5. Կախվածություն ծնողների ընտանիքից

Ինչպես արդեն նշեցինք, ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվիկիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում:

Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանցը: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, քան կինը, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- ✓ Ներուտիկ ընտանիքներ - որտեղ գույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն:
- ✓ Ճգնաժամային ընտանիքներ – որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ , հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման
- ✓ Պրոբլեմային ընտանիքներ – որտեղ առկա խնդիրների , կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ /անընդհատ /: Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, անբարենպաստ ընտանիքներ: Նման վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի և ավելի կետերի տարածք: Այդ կետերը ավելի արագ և ուժեղ չգրգռելու համար գոյություն ունեն մի քանի սկզբունքներ, որոնց հետևելու դեպքում հնարավոր է խուսափել կոնֆլիկտից: Դրանք են.

- Պատասխանատվություն կրեք ձեր պահվածքի, մտքերի, զգացմունքների համար /օրինակ, եթե դուք շրխկացնելով դուրս ես գալիս , դժվար թե ձեր վեճը շուտ ավարտվի/
- Աշխատեք, որպեսզի հակառակորդ կողմի պահվածքը չթելադրի ձեր սեփական պահվածքի ձևը /օրինակ , եթե ձեր վեճի ժամանակ դիմացինը գոռում է, աշխատեք չգոռալ, ընդհակառակը, խոսեք ինչքան հնարավոր է հանգիստ՝ ճիշտ ընտրելով արտահայտությունները, օրինակ, ոչ թե « Դու ինձ խաբում ես», այլ « ես ինձ խաբված եմ զգում» /:
- Հիշեք, որ ցանկացած մարդ ունի իր ընտրության իրավունքը և նա պետք է վարվի իր սեփական հայացքներին և ընկալումներին համապատասխան, անկախ այն բանից , թե ինչպես են պահում իրենց մյուսները:
- Արտահայտեք զգացմունքներն առանց ահաբեկումների /օրինակ՝ «...Դու դեռ կփոշմանես», « Այ, հետո կտեսնես», « Ես քեզ ցույց կտամ» և այլն /:
- Պետք չէ վիրավորել անձը, նրա ընտանիքի անդամներին, ընդլայնել վիճելի հարցը: Խոսեք կոնկրետ խնդրի մասին:
- Պետք չէ հղումներ անել այլ մարդկանց, կամ հեղինակությունների: /օրինակ՝ «Մայրդ ասաց, որ դու ավելիին ես արժանի», «Ես չեմ կարող չկատարել հորս ասածը, նա է մեր տան դեկավարը»/:
- Մի օգտագործեք «միշտ » և «երբեք» բառերը: / օրինակ « Դու միշտ էլ քեզ այդպես ես պահում» /:
- « Պիտակներ » մի կպցրեք /օրինակ հիմարի պես, էջի նման...../
- « Տաք » գլխով որոշումներ մի կայացրեք, սպասեք մինչև կրթերը մի փոքր հանդարտվեն:

Չնայած այս հորդորներին, ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը: Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել իր « ես » - ի արժեքը: Ընտանիքի ձևավորման տարբեր փուլերում այն յուրովի է արտահայտվում:

Ինչպես ցանկացած կենդանի մասնիկն ունի իր զարգացման, էվոլյուցիայի փարթամ ժամանակաշրջանն ու նվազ բարենպաստ ժամանակաշրջանը, այնպես էլ ընտանիքի համար առանձնացնում են հետևյալ ճգնաժամային շրջանները.

1. Միմյանց հարմարվելու փուլ – ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
2. Երեխա ունենալու փուլ – երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:
3. Բախման փուլ – Երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը: Այս խնդիրն էլ ավելի է սրվում, երբ տատիկներ ու պապիկները մշտապես պաշտպանում են երեխաների շահերը, էլ ավելի սրելով ստեղծված կոնֆլիկտային իրավիճակը:
4. Միապաղաղության փուլ կամ միջին ամուսնական տարիքի փուլ – այս շրջանը երբեմն անվանում են զգացմունքների հագեցվածության փուլ կամ քաղցի շրջան:
5. Իվոլյուցիոն կամ միայնակության զգացման փուլ – այս շրջանը համարվում է ամուսնանալուց 18-24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է իվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը, բնակության վայրի փոփոխությունն ու այլ գործոններ:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով: Կոնֆլիկտից կոնֆլիկտ կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրություն:

Նշենք նաև, որ ընտանեկան վեճերի ամենաթեժ պատճառը ամուսինների խանդն է: Իրավիճակը բարդանում է նրանով, որ եթե անգամ « մեղավոր կողմը » ոչ մի առիթ չի տվել, դա ոչ մի բան չի փոխում: Բոլոր փաստարկներն անտեսվում են, քանի որ խանդը զգացմունքի հիվանդագին արտահայտումն է « անխառն » վիճակում, երբ բանականության փաստարկները չեն աշխատում:

Մյուս ակնհայտ պատճառը, այսպես կոչված, « ուղեղի լուսավորումն » է, որը գործում է հատկապես երիտասարդ ընտանիքներում: Երբ համատեղ կյանքի ռոմանտիկ շրջանն ավարտվում է /միջինը 1-3 տարի հետո/, կողակցի թերություններին համակերպվել բոլորը չեն կարողանում: Հաճախ բացահայտում են, որ կիրքը՝ կիրք, բայց ստացած դաստիարակության, կրթության տարբերությունը, չհամընկնող կենսական արժեքները, մասնագիտական կայացածության հարցը և այլ խնդիրներ պարարտ հող են դառնում ներքին չարացածության համար, ինչը հանգեցնում է բացահայտ կոնֆլիկտների: Ուստի երբ ներքին լարվածությունը գերհասունանում է այն մտքից, որ կողակիցը համատեղ կյանքում ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին պատկերացնում էիք, սկսվում են մանր խայթոցները, որոնք սովորաբար արագ վերաճում են լուրջ վիճաբանությունների:

Բացի այդ, կյանքի կենցաղային կողմից ճես փախչի, իսկ նյութական ապահովությունը, տան պայմաններն ու հարմարավետությունը իսկապես կարևորագույն դեր են խաղում: Դժբախտաբար, ժամանակակից ընտանիքների մեծ մասը չի կարող պնդել, թե գոհ է նյութական վիճակից:

Ի՞նչ ազդեցություն ունեն ծնողների փոխհարաբերությունները

Երեխայի վրա

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տազնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Սա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ:

Իհարկե, հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն: Խնդիրը կոնֆլիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Սակայն կարող են պատահել նաև բուռն պոռթկումներ: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Դա կարող է լինել մեկ նախադասություն, օրինակ՝ «ինձ դուր չի գալիս այս իրավիճակը» կամ «ես վատ եմ զգում, երբ ձեզ տեսնում եմ այսպիսին»: Սա կարող է տանել լիցքաթափման, իրադրությանը գիտակցաբար մոտենալուն: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից: Իհարկե, այս

դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

Կոնֆլիկտային միջավայրում մեծացած երեխան հիմնականում այդպիսի միջավայր էլ ստեղծում է, քանի որ այլ տարբերակ չգիտի: Միգուցե նրա մտքում առաջանան երկու հակադիր պատկերացումներ. «ես կարող եմ մեծանալ ու շատ ջերմ ընտանիք ստեղծել» կամ «իմ ստեղծած ընտանիքն էլ կարող է այսպես սառը դառնալ, ավելի լավ է չկազմեն ընդհանրապես»:

Ինչո՞ւ են առաջանում կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ձգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: ձգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ձգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ձգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող–երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ձգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում /հայրեր և որդիներ/ խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել իդեալական ծնողի՝ իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա /իդեալական/ և /իրական/ ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ծգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող–երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի,

բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բալի կատուներին և շներին: Չերադասում է խաղալ /ագրեսիվ/ խաղալիքներով՝ գենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

Որո՞նք են կոնֆլիկտների լուծման եղանակները

Կոնֆլիկտը կարող է հանգուցալուծվել կամ կոնֆլիկտի մասնակից կողմերի միջոցով՝ առանց ուրիշների միջամտության, կամ երրորդ ուժի ներգրավմամբ: Գոյություն ունի գործողությունների 3 եղանակ: Առաջինը բռնությունն է, երկրորդը՝ բաժանումը կամ խզումը, իսկ երրորդը՝ հաշտեցումը:

1. Բռնություն. Ավելի ուժեղ կողմը ուժային մեթոդներով պարտադրում է ավելի թույլ կողմին ենթարկվել իրեն և կատարել իր պահանջները: Բռնություն կիրառելու պարագայում կոնֆլիկտը հանգուցալուծվում է « Ուժեղը միշտ իրավացի է» սկզբունքով: Ընդ որում նկատի է առնվում ոչ միայն ֆիզիկական ուժի գործադրումը, այլ նաև հոգեբանական, բարոյական ճնշումը: Բռնության մեջ մեղավոր են բոլորը՝ նույնիսկ նրանք, ովքեր լուռ համակերպվում են այդ իրավիճակի հետ:
2. Կոնֆլիկտի լուծման արմատական տարբերակներից է ամուսնալուծությունը, որը սակայն առաջ է բերում մի շարք խնդիրներ, այն ունի իր բացասական հետևանքները: Նրանք տարբեր են տարբեր առարկաների համար՝ ամուսնալուծվողների, երեխաների, հասարակության համար: Ամուսնալուծության ժամանակ ամենախոցելին այն կինն է, ով սովորաբար երեխաներ ունի: Նա ավելի շատ հակված է նյարդահոգեբանական խանգարումների, քան տղամարդը: Ամուսնալուծված կինը մնում է չիրացված վերարտադրողական ֆունկցիա: Երեխաների համար ամուսնալուծության բացասական հետևանքները չեն կարող համեմատվել սուբյեկտների համար ունեցած հետևանքների հետ: Երեխան կորցնում է մեկ (երբեմն սիրելի) ծնողին, դաստիարակվում է մեկ ծնողի կողմից, քանի որ շատ դեպքերում մայրերը խանգարում են հայրերին հանդիպել երեխաների հետ: Երեխան հաճախ է ենթարկվում հասակակիցների կողմից իր ծնողներից մեկի բացակայության հետ կապված ահաբեկման, ինչը ազդում է նրա նյարդահոգեբանական վիճակի վրա: Արդյունքում վատանում է նրա առողջական վիճակը և դպրոցական առաջադիմությունը, ինչը հանգեցնում է հարաբերությունների բարդացմանն այն ծնողի հետ, ում հետ նա ապրում է: Ամուսինների ամուսնալուծությունը հանգեցնում է նրան, որ հասարակությունը ստանում է թերի ընտանիք, ավելանում է շեղված վարքագիծ ունեցող դեռահասների թիվը, աճում է հանցագործությունը: Այս ամենը հավելյալ դժվարություններ է ստեղծում հասարակության և պետության համար
3. Հաշտեցում. Հաշտեցման ժամանակ մեծ նշանակություն ունի միջնորդությունը, որը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին.
 - Շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ երկու կողմերն էլ հաղթող դուրս գան,
 - Կողմերը պետք է գոհ լինեն
 - Ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն օբյեկտիվ ճշմարտության վրա, այլ կողմերի համար ընունելի գաղափարների և փորձի վրա
 - Միջնորդը կողմերից ոչ մեկին չպետք է պաշտպանի
 - Միջնորդը պետք է լինի հեղինակություն ունեցող մեկը և կարողանա վստահություն ներշնչել կողմերի միջև :

Այնուամենայնիվ կոնֆլիկտների լուծման ժամանակ մեծ նշանակություն ունեն կանայք, նրանք շատ հաճախ զոհաբերում են իրենց և հանդիսանում ուրպես խաղաղություն կառուցողներ:

Ինչպե՞ս լուծել հակամարտությունը ընտանիքում և հնարավոր է արդյոք կանխել այն:

Օրենքն այս հարցերի պատասխանը չի տալիս: Հոգեբանների աշխատություններում տրված են որոշակի առաջարկություններ: Իսկ Ա.Էրշովն առաջարկում է միջանձնային կոնֆլիկտների կանխարգելման մի շարք կանոններ. Թվում է, թե դրանցից մի քանիսը կարող էին օգտագործվել ընտանեկան կոնֆլիկտների լուծման համար: Խոսքը, մասնավորապես, նման կանոնի մասին է՝ նկատողություն ամուսնուն պետք է անել առանձնապես և պարզել նրա վարքի պատճառները՝ թյուրիմացությունը վերացնելու համար: Հակամարտող ամուսինները անտեսում են այս կանոնը և պարզում են իրենց հարաբերությունները ընտանիքի բոլոր անդամների, այդ թվում՝ երեխաների ներկայությամբ: Ծնողների նման վարքագծի բացասական հետևանքները ակնհայտ են՝ երեխաների կողմից նրանց նկատմամբ հարգանքի նվազում, երեխաների հոգեկանի վրա ազդեցություն, նրանց ամենաթողության վարժեցում: Նույն կանոնը վերաբերում է երեխաների հետ հարաբերություններին: Երեխայի հետ կոնֆլիկտը կանխելու տեսանկյունից շատ կարևոր է, որ ծնողները պաշտպանեն նրա հպարտությունը, խուսափեն նրա վարքի հանրային քննարկումից և թույլ չտան նրա ներկայությամբ անպարկեշտ արտահայտություններ:

Ընտանիքում կոնֆլիկտը կանխելու կարողությունը կայանում է նրանում, որ ընտանիքի անդամները պետք է ձգտեն հասկանալ միմյանց դիրքորոշումը, չմերժեն այն անմիջապես և կտրուկ, հնարավորություն տան մարդուն բարձրաձայնել մինչև վերջ: Ուրիշին համբերատար լսելու կարողությունը՝ լինի դա մեծահասակ, թե երեխա, որոշում է ընտանիքում հաղորդակցության մշակույթը, որը չի ի հայտ գալիս մեկ գիշերում, այլ զարգանում է ընտանիքի ողջ կյանքի ընթացքում: Այս տողերը կարդալուց հետո մեկ ուրիշը կժպտա. ինչպե՞ս կարելի է համբերությամբ լսել հարբած ամուսնուն, ով բամբակ չի հյուսում: Նման իրավիճակում հարաբերությունների ցանկացած հստակեցում ընդհանրապես բացառվում է, քանի որ դրանք կարող են միայն վատթարացնել ու սրել իրավիճակը:

Ընտանիքում կոնֆլիկտները կանխելու հույս տալը կայանում է նրանում, որ մարդը պետք է արագ և վճռականորեն ընդունի իր սխալը՝ հնարավոր քննադատությունից և անաչառ հայտարարություններից առաջ:

Հոգեբաններն իրենց զինանոցում ևս մեկ կանոն ունեն. Դրա էությունն այն է, որ կոնֆլիկտի դեպքում անհրաժեշտ է զրույց վարել ընկերական տոնով, բայց հաստատական ու հանգիստ: Սա նշանակում է, որ դուք պետք է զսպեք ձեր զգացմունքները, վերահսկեք ձեր խոսքը, այսինքն. կարողանալ կառավարել ինքդ քեզ: Թվում է, թե այս կանոններում առանձնահատուկ բան չկա: Բայց դեռ ինչ-որ առանձնահատուկ բան կա, քանի որ, ըստ Ա.Ա. Էրշով, այս կանոնները հիմնված են արձագանքի կամ փոխադարձության ընդհանուր ընդունված օրենքի վրա:

Իրական կյանքում այս կանոնները հայտնի չեն, կամ գիտեն, բայց չեն պահպանվում: Ուստի մեծանում է հակամարտությունը, որի մասնակիցները բոլորն էլ ընտանիքի անդամներն են:

Ընտանիքում կոնֆլիկտի կանխարգելման պես, դրա լուծումը գտնվում է հարաբերությունների հոգեբանության հարթությունում: Կոնֆլիկտի վերացումը պետք է սկսել բախման պատճառի և հնարավոր հետևանքների պարզաբանմամբ և իրազեկմամբ:

Ամուսինները, իմանալով միմյանց և իրենց ընտանիքի անդամների կերպարները, պետք է հարգանք ցուցաբերեն հակամարտության յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ, ինչպես նաև հանդուրժողականություն ցուցաբերեն հակառակորդի դիրքի կամ տեսակետի նկատմամբ: Հակամարտությունը լուծելու համար կարևոր է ընտանիքում նորմալ մթնոլորտը: Անհնար է պարտավորեցնել մարդուն հասկանալ դիմացինին, բախմանը նայել իր դիրքից, բայց միայն յուրաքանչյուր հակամարտող մարդու բարի կամքը կարող է նպաստել հարաբերությունների կարգավորմանը: Երբ խոսքը վերաբերում է երեխաների հետ կոնֆլիկտին, անհրաժեշտ է անհատական մոտեցում, մեծ ուշադրություն նոր առաջացող մարդու նկատմամբ:

Եզրակացություն

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է /ծանր/ բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Օգտագործված գրականություն և ինտերնետային կայքեր

<http://gspi.am/media/journal/2014n1b/24.pdf>

<mailto:info@ache.am>

«Կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցում» ծեռնարկ մանկավարժների համար, Գյումրի, 2012